ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2025 թվականի N 659-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14–րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29–ի N 13-Ն հրամանով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2025 թվականի հուլիսի 29-ին՝ ժամը 10:00–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկ. 2.3-10/ թափուր պաշտոնի մրցույթ:
2.2025 թվականի հուլիսի 29-ին՝ ժամը 11:30–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-11/ թափուր պաշտոնի մրցույթ:
3.2025 թվականի հուլիսի 29-ին՝ ժամը 13:00–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-9/ թափուր պաշտոնի մրցույթ:
4.2025 թվականի հուլիսի 29-ին՝ ժամը 14:30–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջի կարգի մասնագետի /ծածկ. 3.2-3/ թափուր պաշտոնի մրցույթ:
5.Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29–ի N 13-Ն հրամանի պահանջներով:
6. Մրցույթի տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպելու,

մրցույթի մասին հայտարարություն հրապարակելու համար լիազոր անձ նշանակել Մ.Ազատյանին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

2025թ. հունիսի 24

Արաքս համայնք